

ՍՈՒՐԻՈՅ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՐԴԻՆՔՆԵՐԸ ԿԸ ՅԱՅՏԱՐԱՐՈՒՆ ԱՅՍՈՐ

ԳԱՄԱՍԿՈՍ, 3 (ԱՅՓ).- Սուրիոյ մէջ Երկուշաբթի օր (երէկ) աւարտեցան Երեսփոխանական ընտրութիւնները, որոնք երկարած էին երկու օրուան վրայ: Նախագահ Պաշտար Ասատի իշխանութեան համաձայն ի վեր (Յուլիս 2000), Երեսփոխանական առաջին ընտրութիւններն են որ տեղի կ'ունենան Սուրիոյ մէջ: ՍԱՆԱ լրատու գործակալութիւնը հաղորդեց, որ արդիւնքները պիտի հրատարակուին Երեքշաբթի օր (այսօր):

Կը նախատեսուի, որ նախորդ խորհրդարանին նման, նորին մէջ ալ մեծամասնութիւն դառնայ Ազգային Յարաբարակական ձակարկը, որ կը համախմբէ եօթը կուսակցութիւններ: Զակարկը կ'առաջնորդէ իշխող Պասա կուսակցութիւնը:

### ՈՒԱՇԻՆԿԹԵՐՆ ԵՒ ԼՈՆՏՈՆ ԿԸ ՄՆԱՆ ԱՆԴՐՈՒՄԵՆԻ, ԱՐԱՔԱԿԱՆ ԿԱՐԳ ՄԸ ԵՐԿԻՐՆԵՐ ԿԸ ՉԱՐԳԱՅՆԵՆ ՍԱՏՏԱՄ ՀԻՒՄԵՅՆԸ ԱՔՍՈՐԵԼՈՒ ԹԵՉԸ, ԻՍԿ ՓԱՐԻՉ, ՊԵՐԼԻՆ ԵՒ ՄՈՍԿՈՒԱ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԵՆ ՉՕՐԱՎԻԳ ԿԱՆԳՆԻԼ ՊԱՂՏԱՏԻ

Իրաք երէկ շարունակեց քանդումն ու փճացումը «Սուժուտ-2» հրթիռներուն՝ պատերազմէ մը խուսափելու յոյսով: ՄԱԿի եւ իրաքցի պաշտօնատարներ յայտնեցին, որ անցնող երեք օրուան ընթացքին 16 հրթիռներ փճացուած են Պաղատի Հիւսիսը գտնուող Թափի զինուորական համալիրին մէջ: Երէկ արդէն եօթը հրթիռներ փճացուեցան: ՄԱԿի բանբեր Հիւր Ուէքի հաստատեց, որ հրթիռներուն փճացումը կը շարունակուի: Ան չըսաւ սակայն, թէ քանի հրթիռ ցարդ փճացուած է: Ուէքի յայտնեց, որ կը սպասէ քննիչներու տեղեկագիրին:

Պաղատ կ'ըսէ, թէ «Սուժուտ-2» տիպի հարիւր հրթիռ ունի: ՄԱԿ պահանջած է անոնց փճացումը, որովհետեւ արտօնուած 150 քմ-էն աւելի հասողութիւն ունին: Դիւանագիտական աղբիւրներու համաձայն, 73 հրթիռ բանակին յանձնուած է. հետեւեալը, նախ անոնք պիտի փճացուին:

Պաղատ կը յուսայ, որ ընդառաջելով հրթիռները փճացնելու պահանջին, հեռացուցած պիտի ըլլայ պատերազմի սպառնալիքը: Դիւանագետներ եւս կարելի էր փորձաքար մը կը նկատեն հրթիռներու հարցը: Իրաքի իշխանութիւնները հաւանութիւն տուին նաեւ բացատրութիւն տալու «կորուած» նկատուող Անթրաքի մասին: Ուէքի ըսաւ, որ իրաքցիները խոստացած են այս գծով մանրամասն տեղեկագիր մը ներկայացնել:

Հրթիռներուն փճացումը սակայն չի բաւարարեր Բրիտանիան: Վարչապետ Թոնի Պլէյրի մէկ բանբերը ըսաւ, որ Իրաք «Սուժուտ»ները փճացնելէ շատ աւելին պէտք է ընէ՝ ամբողջական ապազինումի ծրագիր մը կիրարկելով: Բանբերը աւելցուց, որ Սատամ Հիւսէյն յստակ բացատրութիւն պէտք է տայ 8500 լիթր Անթրաքին եւ քիմիական այլ նիւթերու մասին, որոնք իրեւ զէնք կ'օգտագործուին: Բանբերը ըսաւ, որ քննութիւններուն վերսկսելէն ի վեր (15 շաբաթէ), Իրաք գոհացուցիչ պատասխան չէ տուած որեւէ հարցի: Բրիտանիա եւ Միացեալ Նահանգներ կը պահանջեն, որ Ապահովութեան Խորհուրդը երկրորդ բանաձեւով մը կանխէ լոյս տայ Իրաքի զէնք զինուորական գործողութեան մը:

Միացեալ Նահանգներ մտադիր են 50 հազարէն 2 հարիւր հազարի միջեւ զինուոր պահել Իրաքի մէջ՝ Սատամ Հիւսէյնի տապալումէն ետք, հաղորդեց «Թայմ» շաբաթաթերթը: Յիշեալ աղբիւրը կը մէջբերէր Իրաքի գործող նախարարութեան բարձրաստիճան պաշտօնատարներ, ըստ որոնց, սակայն, յայտնի չէ, թէ ամերիկեան իշխանապետութիւնը Իրաքի վրայ որքա՞ն պիտի տեւէ: «Թայմ» աւելցուց սակայն,

Շար.՝ Էջ 3

### ԻՐԵՆՔ ԱՆԳԱՐՉ ՈՐՈՇՈՒՄԸ ՏՈՒՆ Էջ 4

ՄԻԱՅՆՆԱԿ ԿԵՅՈՒՄԵՐՈՎ  
ԳԻՄԱԳՐԱՒԵԼ ՄԱՐՏԱՀԱՐԱՒԵՐՆԵՐԸ

#### ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ՝ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐ ՀՐԱՌՈՒԻ ՀԵՏ

Հ. Յ. Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի պատուիրակութիւնը, գլխաւորութեամբ Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ ընկ. Յովիկ Մխիթարեանի, երէկ առաւօտ այցելեց պաշտպանութեան նախարար Խալի Հըրաուիին:

Հանդիպումին ընթացքին քննարկուաները կեդրոնացան շրջանային եւ տեղական հարցերուն վրայ: Շարժել Շէյխի համաարարական գերատնտեսական եւ իրաքեան տագնապին լոյսին տակ շեշտուեցաւ արաբական աշխարհին ներկայացող մարտահրաւերները իբրանաւեան եւ սուրիական միացեալ կեցուածքով դիմագրաւելու անհրաժեշտութիւնը: Միաժամանակ ընդգծուեցաւ շրջանային տագնապին հաւանական իրաւաբանական ձեւով անվանական կարեւորակի վրայ միասնական ձեւով լայնարարելու կարեւորութիւնը:

## ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ ՄԵԾ ԸԱԽԱՔ՝ Ի ՆՊԱՍՏ ՌՈՊՊԵՐԹ ՔՈՉԱՐԵԱՆԻ

Հայաստանի նախագահութեան թեկնածու զործող նախագահ Ռոպոյթ Քոչարեանի աջակցող 15 քաղաքական կուսակցութիւններ եւ հասարակական բազմաթիւ կազմակերպութիւններ երէկ, Երեւանի մէջ Մատենադարանին մօտ հան-

Հ. Յ. Դ. Բիւրոյի անդամ, Ազգային Ժողովի պատգամաւոր Վահան Յովհաննիսեան իր ելոյցով մէջ պատասխանելով ընդդիմութեան պնդումներուն դիտել տուաւ, որ Ռոպոյթ Քոչարեան կարիք չունի խախտումներու, որովհետեւ հաւաքին

դիման ընթացքին ազգայնացիները չէին ծածկեր, թէ իրենց համար Յովհաննիսեան իր ելոյցով միջոցառումները, ինչպէս նաեւ նախկին իշխանութիւններուն վերադարձը, որ պէտք է անոնք իրենց հետ բերեն Լեռնային Ղարաբաղի

կիրը մտած է զարգացման փուլի մէջ: «Ասիկա չի նշանակեր, որ խնդիրներ չունին: Կատարուելիք գործերը չափազանց շատ են. միասին պէտք է շարունակենք վերականգնել արդիւնաբերութիւնը, արդիականացը-

նենք գիւղատնտեսութիւնը: Ունինք քաղաքական ուժերու խումբ մը, որ պատրաստ է պատասխանատուութիւն ստանձնելու՝ երկրին զարգացման հետագայ հինգ տարիներուն համար», ընդգծեց Քոչարեան:



ARMENPRESS

րահաւաք մը կատարեցին, վերստին աջակցութիւն յայտնելու համար իրենց պաշտպանած թեկնածուին: Հանրահաւաքին մասնակցողներուն թիւը անհամեմատելիօրէն աւելի էր ընդդիմութեան կողմէ նոյն վայրին մէջ ցարդ կազմակերպուած հաւաքներու մասնակիցներու թիւէն: Հանրահաւաքին ընթացքին ելոյթ ունեցան Ռոպոյթ Քոչարեանի թեկնածութիւնը պաշտպանող քաղաքական ուժերու ներկայացուցիչները, որոնք անգամ մը եւս կարեւորեցին երկրին մէջ կայունութեան եւ միասնականութեան անհրաժեշտութիւնը:

մասնակցող բազմահազար քաղաքացիները ներկայացուցիչներն են ի նպաստ Քոչարեանի քուէարկած 700 հազար քաղաքացիներուն: «Միասին եկած ենք ապացուցելու, որ վճռական ենք մեր ընտրութեան մէջ, որ ժողովուրդը այստեղ հաւաքուած է առանց թեւադրանքի կամ պարտադրանքի, իր կամքով»: Ազգային Ժողովի փոխնախագահ, Հայաստանի Հանրապետական կուսակցութեան Խորհուրդի անդամ Տիգրան Թորոսեան իր ելոյթին մէջ յայտնեց, որ վերջերս Հայաստանի, վրաստանի եւ Ազգայնացի խորհրդարանականներու հան-

տագնապի լուծման 1997 իրենց տարբերակը: Ռոպոյթ Քոչարեան իր խօսքին մէջ շնորհակալութիւն յայտնեց իրեն աջակցող քաղաքական ուժերուն եւ իրեն վստահութեան քուէ տուող քաղաքացիներուն: «Մեզի պէտք է այնպիսի յաղթանակ, որ հնարաւորութիւն կու տայ հետագային արդիւնաւէտ ձեւով աշխատելու երկրորդ կառուցելու համար», նշեց Քոչարեան: Նախագահ Քոչարեան նկատել տուաւ, որ անցնող հինգ տարիները դժուար տարիներ եղած են, սակայն յաղթահարուած են բազմաթիւ դժուարութիւններ, եր-

### ԱԿՆԱՐԿ ԲԱՆԱՎԷՃ

Բնական պէտք է թուի որեւէ երկրի մէջ կայանալիք ընտրութեան առաջ լարուած մթնոլորտի ստեղծումը կամ բեւեռացած ընտրապայքարի երեւոյթը: Այս հաստատումը աւելի կը շեշտուի, երբ կը խօսուի առաջին եւ երկրորդ ընտրական փուլերու միջեւ ինկող ժամանակահատուածին մասին:

Փոխադարձ ամբաստանութիւններով, երկիրը աւելի անվտանգ պահելու յանձնարարութիւններով, հարկերը նուազեցնելու խոստումներով մրցակից կողմեր իրար կը գերազանցեն շահելու համար ընտրապայքան ժամանակը քուէները: Այդպէս է ընդհանրապէս ժողովրդավար կարգերով ղեկավարուող երկիրներու պարագային:

Սակայն, ամբողջարակաւ միջավայրերի դուրս կու գայ պահը անպայման, որ դէմ առ դէմ կը հանէ մրցակից կողմերը (յատկապէս վերջին հանգրիւնին իրարու դէմ մրցանք մրցակից երկու կողմեր): Եւ այդ պահուն, տուեալներով, հիմնաւորումներով եւ առարկայական նախադրեալներով թեկնածուները կը իօսին իրենց հայեցակարգային ինտիմներուն, պետութեան դեկլարացիոն մեքանիզմներուն, գործընթացային հարցերուն, տնտեսական համակարգի բարելաման միջոցներուն, ազգին ու պետութեան դիմագրուած մարտահրաւերներու շրջանցման ձեւերուն մասին:

Առանց այս վերջին երափակիչ բաժինին ընտրաշարը կը մնայ թերի եւ յատկապէս քաղաքական բեմ նոր մուտք գործելու պոռթ թեկնածուին կարողականութիւնը, դեկլարելու հմտութիւնը եւ պանապան ինտիմներու վերաբերող հայեցակարգային մտեցումները կը մնան անորոշ ընտրապայքան ժամանակահատուածին համար:

Հայաստանի նախագահական ընտրութիւններու պարագային երափակիչ այս հանգրուանը ի վերջոյ կայացաւ երէկ գիշեր. ՀԻՆ ուղղակի պատկերասփռուեցաւ երկրորդ փուլի մնացած երկու թեկնածուներուն դէմ առ դէմ հանդիպումը: Անոնց ուղղուեցան երկիրը, պետութիւնն ու ժողովուրդը յուլող պանապան հարցումներ: Հետեւողները վստահաբար տպաւորութիւն կազմեցին թեկնածուներու հարցերուն իրապետեան, իմացական կարողութեան, քաղաքական հայեցքներուն մասին. այլապէս, մեր թերթը կ'անդադրադադնայ որոշ ժամանակէ ի վեր սպասուող այս երեւոյթին:

Այս բոլորը՝ բնական կարգով: Սորութիւնը, գիտը, այս պարագային ընդհանրապէս թեկնածուի ետին կանգնող կապիտալիզմը <<Շի տիրապետչական նախագահ Դաւիթ Շահնապարեանի ընտրաշարի տեսութիւնն էր՝ հանրահաւաքային բանավէճի պահանջը: Ի՞նչ կը նպատակադէր բեւեռացած ու լարուած մթնոլորտի մէջ հանրահաւաքային բանավէճի առաջարկումը: Յստակ է (եւ ապահովաբար առաջարկողն ու պահանջողն ալ գիտեն), որ հանրահաւաքն ու բանավէճը համատեղելի երեւոյթներ չեն: Նման մթնոլորտի մէջ նման պահանջ դնելը ինքնաբացալայտման արարք է պարզապէս: Շահնապարեան յուսարձակները կը կեդրոնացնէ ընդդիմադրութեան ետին կանգնած նախորդ իշխանութեան մնացորդացի վրայ, որ այսպիսով կը մատնէ իր դաւադիր նկրտումները՝ ամբողջութիւնը գրգռելու եւ երկիրը ապակայունացնելու: Շահնապարեանի այս կոչին անարձանագիտելի կը նշանակէ եւ իշխանաւեզ, եւ՝ նոյնիսկ ընդդիմադիր ուժերու այս վտանգաւոր ծուղակի Ներքաշումին մերժում:

Հայրենիքի ներքաղաքական կայունութիւնը ինտրոյ առարկայ դարձնելու գնով պէտք է շտաշ քշել վրէժնորդութեամբ յատկանշուող ընտրաքաղաքական վարքագիծեր, որոնց հեղինակներն Վարչախումբը օրին շատ սուղ արժեք է՝ մեր հայրենիքին, է՛ւ մեր ժողովուրդին:

«Ա.»

### ՀԱՅԱՍՏԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐՈՒ ՄՊԱՍՈՒԱԾ ԲԱՆԱՎԷՃԸ ԿԱՅԱՅԱԻ

Հայաստանի Հանրային Պատկերասփռուի հրատարակելու կազմակերպութեամբ պատկերասփռուի «Կենտրոն», «Արմենիա», «Ալմ», «Շանթ», «Պրոմեթէս» անկախ կայաններու ներկայացուցիչ լրագրողներու մասնակցութեամբ, Հայաստանի նախագահութեան ընտրութիւններու երկրորդ փուլի երկու թեկնածուներուն՝ գործող նախագահ Ռոպոյթ Քոչարեանի եւ Վահան Յովհաննիսեանի միջեւ տեղի ունեցաւ բանավէճ, որ ուղղակի սփռուեցաւ Հայաստանի Հանրային Պատկերասփռուին:

Թեկնածուներուն միջեւ բանավէճ ծաւալեցաւ նաեւ ընտրարշախի հոլովոյթին, կատարուող մեղադրանքներուն, իրաւապահ խախտումներու անցումներուն պնդումներուն մասին: Քոչարեան եւ Վահաննիսեան իրենց տեսակէտները ներկայացուցին յատկապէս Լեռնային Ղարաբաղի տագնապին, հայեցողութեան, յարաբերութեան վերաբերող հարցերու:

բարեփոխման եւ Հայկական Յեղափոխութեան ճանաչման հարցին:

**ԿԵՂՈՒՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ԿԸ ԸՆԹԵՒ**

Հայաստանի Կեդրոնական Ընտրական Յանձնաժողովը երէկ հերքեց Մարտ 10-ը ընդդիմութեան կողմէ կատարուած այն յայտարարութիւնը, թէ ԱՊՀ-ի գործադիր քարտուղար Եուրի Ետրով հեռացում է ԱՊՀ-ի դիտորդական առաքելութեան ղեկավարի իր պաշտօնէն:

Բանավէճին մասնակցից իւրաքանչիւր լրագրողի առիթ տրուեցաւ թեկնածուներուն ուղղելու երկու հարցում: Թեկնածուները պատասխանելով լրագրողներուն, անդրադարձան Հայաստանի տնտեսու-

### ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏ ԿԸ ՎԵՐԱՀԱՍՏԱՏԵ ԻՐԱՔԻ ՆԿԱՏՄԱՐ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԿԵՑՈՒԱԾՔԸ

Նախագահ գործ. էմիլ Լահուտ երկհ նկատել տուաւ, որ Շարմէլ Շէյխի մէջ գումարուած Արաբական Լիկայի 15րդ վեհաժողովը միջազգային կեցուածքին համապատասխանեց. Իրաքի դէմ ամերիկեան պատերազմը մերժելով՝ Ե. Գորակցելով ՄԱԿի Ապահովական խորհուրդի որոշումներու գործադրութեան, յատկապէս Ապահովական խորհուրդի թիւ 1441 բանաձեւի ամբողջական գործադրութեան:

Նախագահական պալատ այցելած երեսփոխանները յայտնեցին նաեւ, որ նախագահ Լահուտ գոհ է, որ արաբ երկիրներու ղեկավարները կրցան միացեալ կեցուածք մը որդեգրել՝ եւրոպայեան եւ ամերիկեան երկիրներուն, ինչպէս նաեւ Ռուսիոյ եւ Չինաստանի համապատասխան: Ան գրեւորեց նաեւ ոչ յանձնառու երկիրներու եւ վատիկանի նախաձեռնութիւնները՝ իրաքեան տագնապը զինուորական ուժով լուծելու փոխարէն խաղաղ լուծումներ քննարկելու, միշտ կարեւոր եւ անհրաժեշտ նկատելով արաբական նոյնանման կեցուածք մը նշեալ երկիրներու կողմէն:

Նախագահ Լահուտ շեշտեց արաբ ղեկավարներուն կողմէ Պէյրութի վեհաժողովի որոշումներուն կառուցողական եւ ընդգծեց, որ Պէյրութի մէջ կայացած Արաբական Լիկայի անցեալ տարուան վեհաժողովը կը մնայ օրինակելի, որովհետեւ կրցած է դրսեւորել արաբական իսկական միասնականութիւնը եւ կը նկատուի հաշտութեան վեհաժողով, այնքան ատեն որ լուծած է Իրաք - Մոզի երկիրներ տագնապն ու յարուածութիւնը:

Նախագահ Լահուտ դիտել տուաւ, որ անցեալ շաբաթավերջին կայացած վեհաժողովին Լիբանան - Սուրիա գործակցութիւնը ունեցաւ իր դրական ազդեցութիւնը, ինչպէս արդէն ունեցած էր վեհաժողովին առաջ կայացած արաբ արտաքին գործոց նախարարներու ժողովին ընթացքին:

Նախագահ Լահուտ յայտնեց, որ կը մնայ սպասման վիճակի մէջ՝ մինչեւ Պահրէյնի թագաւորը սկսի հաղորդակցութիւններուն, որոնց հիմամբ վեհաժողովի աւարտին կազմուած յանձնախումբը, որոնց մէջ նաեւ Լիբանան, պիտի այցելէ շարք մը երկիրներ՝ բացատրելու համար իրաքեան տագնապին նկատմամբ արաբական երկիրներու կողմէ որդեգրուած կեցուածքը:

Նախագահ Լահուտ Պաապատայի մէջ ընդունեց նախկին փոխ վարչապետ, երեսփոխան Միշէլ Մըրը, որուն հետ քննարկեց տեղական եւ շրջանային զարգացումները:

### ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԿԸ ԴՐՈՒԱՏԵ ՆԱԽԱԳԱՀ ԱՍԱՏԻ ՀԱՄԱՐԱԲԱԿԱՆ ԿԵՑՈՒԱԾՔԸ

Խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրի երկհ շեշտեց, որ Շարմէլ Շէյխի Արաբական Լիկայի վեհաժողովին խօսք առնող արաբ ղեկավարներուն մէջ միակ անձը, որ ամբողջ արաբ ժողովուրդին անունով խօսեցաւ՝ Սուրիոյ նախագահ Պաշար Ասատն է, իսկ նախագահ Լահուտի վերահաստատումը Պէյրութի Արաբական Լիկայի վեհաժողովին տուած որոշումներուն՝ ողջունելի է ըստ ամենայնի:

Պըրրի երկհ ընդունեց իմբազիրներու սեւտիքայի նախագահ Մըլիհէմ Քարամը, որուն հետ քննարկեց տեղական եւ շրջանային իրադարձութիւններն ու վարդապետները, ինչպէս նաեւ բազմաթիւ այլ հարցեր:

Հանդիպումէն ետք Քարամ նշեց, որ Պըրրի ընտրական նոր

օրէնքի առաջարկը՝ Լիբանանը մէկ ընտրաշրջանի վերածել, կը նկատէ լոկ առաջարկ մը, որ քննարկումի ենթակայ կը մնայ, եւ կրնայ նոյնիսկ շնչունիլ: Ան աւելցուց, որ կը նախընտրէ կորսնցնել քանի որ երեսփոխան, քան հայրենիքը:

Պըրրի իր խօսքին մէջ անդրադարձաւ նաեւ Քարամի մէջկալմանը՝ իրաքեան վեհաժողովին եւ ընդգծեց, որ Շարմէլ Շէյխի մէջ նախագահ Ասատի ներկայութեան չստացումը նպաստակները անգամ մը եւս պիտի արժարժուն իսլամական վեհաժողովին եւ պիտի փորձուի կրկին ձեռք ձգել պահանջուածը:

Պըրրի ընդգծեց, որ Շարմէլ Շէյխի վեհաժողովը եթէ չկայանար, Արաբական աշխարհը ոչինչ կը կորսնցնէր: Այսինքն՝

### ՆԱԽԱՐԱՐ ՀԱՄՄՈՒՏԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ՝ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՐՑԵՐՈՒ ԼՈՒԾՄԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՈՒ

Արտաքին գործոց եւ արտերկրի իրաւանցիներու հարցերու նախարար Մահմուտ Համմուտ երկհ հեռաձայնային հաղորդակցութիւն մը ունեցաւ սուրիացի իր պաշտօնակիցին՝ Ֆարուք Շարէհի հետ: Արաբական Լիկայի ընդհանուր քարտուղար Ամր Մուսայի հետ:



Համմուտ եւ Քիւնըն

Համմուտ Շարէհի եւ Մուսայի հետ կատարեց խորհրդակցութիւններ Արաբական Լիկայի 15րդ վեհաժողովին յառաջացուցած յատուկ յանձնախումբին կատարելիք աշխատանքներուն մասին: Նշեց, որ նշեալ յանձնախումբին մաս կը կապեն Լիբանանի, Պահրէյնի, Թունիսի եւ

Եգիպտոսի արտաքին գործոց նախարարները, ինչպէս նաեւ Ամր Մուսա: Յանձնախումբը պիտի մեկնի շարք մը երկիրներ, որ անոնց ղեկավարութեան պիտի ներկայացնէ վեհաժողովին որդեգրուած Արաբական միացեալ կեցուածքը:

Համմուտ երկհ առաւօտեան ընդունեց Լիբանանի մէջ Բրիտանիոյ դեսպան Ռիչըրտ Քինընը, որուն հետ քննարկեց Լիբանան - Բրիտանիա երկկողմանի յարաբերութիւնները, ինչպէս նաեւ Իրաքի տագնապը:

Հանդիպումէն ետք Քինըն նկատել տուաւ, որ Իրաքի կողմէ «Մուսուտ-2» հրթիռները փճացնելը բարար չէն եւ խուսաւում են: Ան աւելցուց, որ Իրաքի դէմ ամերիկեւրիտանական հաւանական յարձակում մը տակաւին առկայ է, սակայն ան դրադառնալով քրիտասական «Սան» օրաթերթին հրատարակած մէկ լուրին, թէ Իրաքի դէմ պատերազմը պիտի սկսի յառաջիկայ 13 Մարտին, Քինըն շեշտեց, որ թերթը բրիտանական կառավարութեան անունով արտախառնուող լրատու միջոց մը չէ, եւ պատերազմի սկսելու յստակ թուական մը չէ ճշդուած տակաւին:

#### ՄԱՀԱՉԴ

Տիգրան Մամբուր Կոմիտեէ կը գումէ իր շրջանի հաւատարմ ընկերներէն:

#### ՅԱՐՈՒԹԻՒՆ ՏԵՐ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ երկուշաբթի, 3 Մարտ 2003ին:

#### ՄԱՀԱՉԴ

Հ. Մ. Ը. Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութիւնը կը գումէ իր շրջանի անդամներէն:

#### ՅԱՐՈՒԹԻՒՆ ՏԵՐ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ երկուշաբթի, 3 Մարտ 2003ին:

#### ՄԱՀԱՉԴ

Հ. Մ. Ը. Մ.ի Պէյրութի մասնաճիւղի վարչութիւնը կը գումէ իր շրջանի եղբայրներէն:

#### ՅԱՐՈՒԹԻՒՆ ՏԵՐ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ երկուշաբթի, 3 Մարտ 2003ին:

#### ՄԱՀԱՉԴ

Տիկին Առնա Տէր Պետրոսեան եւ զաւակները՝ Արի, Հայկ եւ Արամ

Տէր եւ տիկին Գէորգ Բարսեղեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Տիգրան Տէր Պետրոսեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Ժորժ Տէր Պետրոսեան եւ զաւակունք Տիկին Ազատուհի Տէր Պետրոսեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Կարպիս Պալեան

Տիկին Անժէլ Պէքարեան

Տէր եւ տիկին Ջաւէն Փանոսեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Սամուէլ Պէքարեան եւ զաւակունք եւ համայն ազգականներ կը գումեն իրենց ամուսնոյն, հօր, եղբոր, հօրեղբոր, մօրեղբոր եւ հարազատին՝

#### ՅԱՐՈՒԹԻՒՆ ՏԵՐ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ երկուշաբթի, 3 Մարտ 2003ին, առաւօտեան ժամը 3:00ին, «Օթէլ Տիէօ» հիւանդանոցին մէջ, յետ կարճատեւ հիւանդութեան:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Երեքշաբթի, 4 Մարտ, կէսօրէ ետք ժամը 1:00ին, էշրեֆիէի Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանդուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

- Ներկայ ընդունելի իբրեւ մահազգ:
- Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Մար Միսայէի, Եկեղեցականութեան ընկերութեան ղեկավար, Չամիչեան շէքը, Երեքշաբթի 4, 2 որեքշաբթի 5 եւ Հիւնգաբթի 6 Մարտին:
- Կը խնդրուի փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւնները կատարել Համազգայինի Մ. եւ Հ. ձեմարանի Մաներու ֆոնդին:

#### ՎԱՐՉԱՊԵՏԸ ԵՐԿՐԻՆ ՈՒ ՇՐՋԱՆԻՆ ՀԱՐՑԵՐԸ ՔՆՆԱՐԿԵՑ ՏԵՂԱՑԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐՈՒ ԵՒ ՕՏԱՐ ԴԻՒԱՆԱԳԷՏՆԵՐՈՒ ՀԵՏ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի երկհ Քորթեմի իր պարագրքն մէջ ընդունեց հանրօգուտ շինութեանց եւ փոխադրութեան հարցերու նախարար Նեթիպ Միքաթիէն եւ արդարութեան նախարար Սամիր Ժըրըր: Ներկայ գտնուեցան նաեւ վարչապետ Հարիրիի խորհրդակցական Ֆատի Ֆուադ:

Հանդիպումին Միքաթի Գերկայացուց Լիբանանը հարուածող փոթորիկին պատճառած վնասներուն լուծման համար որդեգրուած միջոցառումները:

Վարչապետ Հարիրի ընդունեց Լիբանանի մէջ Երոպական Միութեան դեսպան Փարթիք Ռընոն, որուն հետ ընճարկեց շրջանային կացութիւնն ու արձանագրուած զարգացումները, ինչպէս նաեւ Շարմէլ Շէյխի Արաբական Լիկայի վեհաժողովին արդիւնքները:

Վարչապետ Հարիրի այցելեցին նաեւ երեսփոխաններ Մոհամետ Ալի Մայս եւ Անթուան Հատուտ:

Մայս անդրադառնալով անցեալ շաբաթավերջին կայացած վեհաժողովին յայտնեց, որ Սուրիոյ նախագահ Պաշար Ասատի խօսքը յրսեւորեց արաբ ժողովուրդի նպատակները եւ յոյսերը:

Հատուտ մշեց, որ նախագահ գործ. էմիլ Լահուտ եւ վարչապետ Հարիրի կ'աշխատին ի նպաստ ժողովուրդին եւ երկրին զերագոյն շահերուն:

### ՆՃՄԱՐ

### ԿԱՐԵԼԻ՞ Ե ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԾԱԾԿԵԼ

Երկհ գիշեր, Հայաստանի Հանրային Հեռուստատեսութեան կայանէն ուղղակի պատկերասփռումով տեղի ունեցաւ նախագահական ընտրութեան Բ. փուլի երկու թեկնածուներուն՝ գործող նախագահ Ռոպէրթ Քոչարեանի եւ ՀժԿի ղեկավար Ստեփան Դեմիրճեանի միջեւ բանավեճը, զոր այնքան կը սպասէր հայրենի թէ արտասահմանի մեր ժողովուրդը:

Առաջին հերթին պետք է շնորհաւորել երկու թեկնածուները, որ ներկայացան բեմահարթակ եւ ամենայն քաղաքավարութեամբ ու պտուշաճութեամբ պատասխանեցին լրագրողներուն հարցումներուն: Ժողովրդավար ու բարգաւաճ երկիր ըլլալու մեր հանգամանքը այս իմաստով էրբք խնդրոյ առարկայ չդարձաւ, ընդհակառակն, քսանմէկերորդ դարու պետութեան մը վայել ղիմագիծով ներկայացանք աշխարհին:

Երկուսն այս ողջունելի բանավեճին լոյսին տակ, մեր ժողովուրդը հիմա վստահարար աւելի լաւ պիտի կատարէ իր ընտրութիւնը երկու թեկնածուներուն միջեւ, պարպապէս որովհետեւ շատ աւելի իրապէս դարձաւ անոնց ընդհանուր ծրագիրներուն ու մասնաւոր անոնց իմացական կարողութեան:

Յարգելով հանդերձ իրաքանչիւր հայու կարծիքը երկուսն բանավեճին արդիւնքին մասին, յարգելով (քայց ոչ անպայման բաժնետիր) նաեւ երկու թեկնածուներուն գաղափարները, պէտք է սակայն ի վերջոյ արժեւորում մը կատարել, հիմնուելով երկուստեք կատարուած վերլուծումներուն վրայ:

Արդար պետք է ըլլալ եւ ընդունիլ, որ մեր երկու թեկնածուներուն իմացական կարողութիւնը նոյն ալիքի վրայ չէ:

Հիմնաւորեք մատնանշումը: Ներքին իմաստով՝ կաշառակերութեան, քատրային քաղաքականութեան, ստուերային տնտեսութեան, սոցիալական հարցերու, արտաքին իմաստով՝ Ռուսիոյ, ԱՊՀ-ի եւ Եւրոպայի հետ յարաբերութեան, ազգային հիմնահարցերու գծով՝ Յեղասպանութեան, Լեռնային Ղարաբաղի տագնապի վերաբերեալ էական թեմաներու շուրջ ուղղուած որոշակի հարցումներուն երբ մէկ կողմէ կը պատասխանուի քանի մը կիսատ պրատ անհասկնալի տողերով, աւելի՛ն, երբ նոյնիսկ հարցումին կը տրուի բոլորովին ուրիշ՝ անտեղի ու անկապ պատասխան մը, իսկ միւս կողմէ՝ կը տրուի յստակ թիւերով, ակարեմական, քանի մը դիտանկիւնէ շօշափուած շինիչ գոհացուցիչ ու ամբողջական պատասխաններ, կարելի չէ խուլ ձեւանալ, լուռ մնալ:

Իր անկախութեան նոր տիրացած, նոր կազմաւորուող ու մասնաւոր յստակ թշնամիներով պաշարուած երկրի մը համար, դա՛տ ունեցող ժողովուրդի մը համար կարիքը կայ իմացական բարձր կարողութեան տէր, հաւասարակշռուած, մասնաւոր քաղաքական փորձառութեան տէր հասուն ղեկավարի մը, որուն կարելի է վստահիլ ազգին ու հայրենիքին ճակատագիրը:

Իսկ այս բոլորէն ետք տակաւին կասկած կա՞, թէ ո՞վ էր երկուսն որոշակիորդ այս իմաստով:

ՀՐԱՉ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

#### ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ս. Նշան Մայր եկեղեցւոյ մէջ, մեծ պահոց շրջանին, Արեւագալի արարողութիւնները տեղի պիտի ունենան ամէն Չորեքշաբթի եւ Ուրբաթ օրերը, առաւօտեան ժամը 9:00ին, իսկ Տոկոսները Ուրբաթ օրերը, երկուշաբթի ժամը 6:00ին:

Կը հրաւիրենք մեր հաւատացեալ ժողովուրդը:

ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐ Ա. ՆՃԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՏԻՈՅ

Հ. Մ. Ը. Մ. ԺՏԵՅՏԵԻ ՄԱՍՆԱԾԻՂ

#### ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Տեղի կ'ունենայ Չորեքշաբթի, 5 Մարտ 2003ին, երկուշաբթի ժամը 8:00ին, ԼՈՒՍԻ «Աճախիտ» մասնաճիւղի կալուքին մէջ, Մար Եուսէֆ:

ԿԱՐՉՈՒԹԻՒՆ

#### ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Լիբանանում ՀՀ դեսպանութիւնը տեղեկացնում է, որ Հայաստանի Հանրապետութեան նախագահի ընտրութիւններու երկրորդ փուլի օրը՝ ս. ք. Մարտի 5ին, Պուրճ Համուտի քաղաքապետարանին հրապարակից ժամը 14:00ին մինչեւ 19:00 կը կատարուի ընտրողների անվճար փոխադրում Լիբանանում ՀՀ դեսպանութիւն:

ԼԻԲԱՆԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՍԱՄԱՆՈՒԹԻՒՆ

#### ԾԱԽՈՒ ԅԱՐԿԱԲԱԾԻՆ

- Ամսոնս, 2 66չասնեակ, հիւրասենեակ, ճաշասենեակ եւ յարակից մասեր: Թեկիթեան կալուքի կից, գին՝ 37,000 \$: Հեռ. 01-269098:

#### ԿՈՒՉՈՒԻ

- Վարպետ ոսկերիչ (սեւտեք) մը եւ կապոյտ մոմի վարպետ մը: Դիմելի հեռ. 01-242549:

**ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ  
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ  
ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ  
ԱՆԿԼԻՔԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ  
ՆՈՐ ՊԵՏԻՆ ԳԱՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ**

Անկլիքան եկեղեցույ նոր հոգևոր պետ՝ Ռոբերտ Ուիլիզյան արքեպիսկոպոս, Հինգշաբթի, 27 Փետրուար 2003ին Քենթրալըրիի գահին բազմեցաւ հանդիսաւոր արարողութեան մը ընթացքին, որուն ներկայ գտնուեցան Անգլիոյ գահաժառանգ Չարլզ իշխանը, պետական պալատի նախագահ Էլեոնոր Դեյվիսը եւ կրօններու ներկայացուցիչներ եւ պաշտօնական հրատարակներ: Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը եւ Ն. Ս. Օ. Տ. Ս. Արամ Ա. կաթողիկոսը ներկայացուց Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան թեմի առաջնորդ Օշական արք. Չոլոյեան: Նշենք, որ վեհափառ հայրապետը հրատարակած էր անձամբ մասնակցելու գահակալութեան սոյն հանդէսին:

Գահակալութեան հանդէսը տեղի ունեցաւ Քենթրալըրիի Մայր տաճարին մէջ, ուր նորընտիր արքեպիսկոպոսը իր հաւատարմութեան ուխտը կատարեց եւ ստացաւ հովուական մականը, իբրեւ 104րդ հովուապետ Անկլիքան եկեղեցույ:

Վեհափառ հայրապետին պատուիրակը յաջորդ օր առանձին հանդիպում մը ունեցաւ Ուիլիզյան արքեպիսկոպոսին հետ, անոր փոխանցելով Նորին Սուրբ Օծուութեան եղբայրական սիրալիր ողջոյններն ու բարեմաղթութիւնները: Միաժամանակ արքայանք վեր առաւ հայ եկեղեցույ եւ յատկապէս Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան ու Անկլիքան եկեղեցույ միջեւ գոյութիւն ունեցող երկար տարիներու սերտ կապերն ու գործակցութեան ոգին: Խօսակցութեան նիւթ դարձան նաեւ ներկայ ընկերութիւնը յուլոյ ընկերային ու բարոյական հարցեր, որոնք համաքրիստոնէական ձեռնարկներու վերաբերեալ, ի սեր նոր սերունդի քրիստոնէական դաստիարակութեան: Օշական արքայանք նորընտիր հոգևոր պետին յանձնեց այս առիթով վեհափառ հայրապետին ուղարկած թանկարժէք յուշանուէրը՝ էջ մը Յովհաննու Աւետարանէն, Կիլիկեան մանրակարգութեան նրբաշխատ վրձինով իրագործուած:

Քենթրալըրիի նորընտիր Ուիլիզյան արքեպիսկոպոս, իր կարգին շնորհակալութիւն յայտնեց վեհափառ հայրապետի նուիրակին ներկայութեան եւ եղբայրական իր ողջոյնը լղեց անոր, արտայայտելով իր յատուկ համակրանքը Արամ Ա. վեհափառ հայրապետին, իբրեւ միջեկեղեցական շարժման մէջ իր կարեւոր ներդրումը ունեցող ուժական ներկայութիւն:

**ԿԸ ՆՈՒԻՐԵՆ**

● Արփիհնէ Համբարեանի մահուան առիթով, Ս. Նշան Մայր եկեղեցույ եղած են հետեւեալ Գուրդարանութիւնները.

- Գ. Հանգա Մըրէէ 10,000 լ. ո., տէր եւ տիկին Ժիրայր Իգնատիւսեան 50,000 լ. ո., Երանուհի Մանգիսեան 20 \$, X-Ray Department 100 \$, օր. Թագուհի Նարիպեան 20,000 լ. ո., տէր եւ տիկին Յովհաննէս Էֆօշկերեան 20,000 լ. ո., տէր եւ տիկին Ժոզէֆ Ոսկերիչեան 10,000 լ. ո., տէր եւ տիկին Ժոզէֆ Էաթրիպ 20 \$, օր. Փեփրոնիա Հայկ Տէր Սարգիսեան 30,000 լ. ո., տէր եւ տիկին Ժաք Հոմար 20 \$, Յակոբ եւ Թալիմ Գըլպաշեան 20 \$, տիկին Երանիկ Թօփալեան 20 \$, տէր եւ տիկին Ալպէր Սարգիսեան 50,000 լ. ո., Ծոնդիկ եւ Ռոպէր Գասպարեան 50,000 լ. ո., Գոհարիկ եւ Աստղիկ Պաճազեան 50,000 լ. ո., օր. Սալմա Նատէր 20,000 լ. ո., տէր եւ տիկին Ազար Ազար 25,000 լ. ո., տէր եւ տիկին Ժան Հոմար 50,000 լ. ո., տիկին Հելլեն Ալֆա 25,000 լ. ո., տիկին Ուատատ Պայտաս 15,000 լ. ո.:

● Նոյն առիթով, Ս. Նշան Մայր եկեղեցույ Աղքատախնամիճ՝ տէր եւ տիկին Սեպուհ Միգասեան 50,000 լ. ո.:

● Նոյն առիթով, ԼՕՄԻ «Մեղրի» մասնաճիւղին՝ տէր եւ տիկին Յարութիւն Արթիսեան 25,000 լ. ո., տէր եւ տիկին տղթք. Մհեր Արթիսեան 75,000 լ. ո.:

**ՈՒՇԻՆԿԹԸՆ ԵՒ ԼՈՒՆՏՈՆ  
ԿԸ ՄԵԱՆ ԱՆԴՐԴՈՒԵԼԻ...**

Շարունակուած Ա. ԷջէԳ



Ամերիկեան օդուժի «Պի. 52» օդանաւը կը հասնի Ծոցի շրջան

որ Իրաքը «ազատագրողները» ջերմ ընդունելութեան պիտի չարժանանան, եթէ անմիջապէս անդհովն ու այլ օժանդակութիւն չտրամադրեն իրաքի ժողովուրդին:

Ֆրանսայի նախագահ Ժաք Շիրաքը, որ կ'առաջնորդէ Իրաքի դէմ պատերազմը մերժող ճակատը, Ալճերիոյ մէջ յայտարարեց, որ Իրաք տակաւին յաւելեալ գործակցութիւն պէտք է ունենայ ՄԱԿի քննիչներուն հետ: Շիրաք աւելցուց, որ Իրաքի տագնապը պէտք է խղճող միջոցներով լուծուի: Ան աւելցուց, որ Ֆրանսա կ'ուզէ առիթ տալ խաղաղ պայգիներուն ճիգերուն ու միջոցներուն: Շիրաք ըսաւ նաեւ, որ Իրաքի դէմ պատերազմը որքան ընդարձակուի ու աղէտալի հետեւանք պիտի ունենայ ամբողջ շրջանին վրայ: «Այս հանգրուանին, Միջին Արեւելքը նոր տագնապներ չ'ուզեմ», շեշտեց Շիրաքը:

Գերմանիա եւս, որ կը մերժէ պատերազմը, երէկ ողջունեց Տրիբունը փնտրելու աշխատանքը: Արտաքին գործոց նախարարութեան թանքերը ըսաւ, որ Իրաք ճիշդ ճամբուն վրայ քայլ մը առած է, զոր պէտք է շարունակէ:

Ռուսիա երէկ պատրաստակամութիւն յայտնեց զինուորական անձնակազմ ուղարկելու Իրաք՝ մասնակցելու համար ՄԱԿի գէնթի քննութիւններուն: Սպայկոյտի անդամ գոր. Եուրի Պալուեւսքի ըսաւ, որ ռուս ներկայացուցիչներ ՄԱԿ ուղարկուած են Ապահովութեան Խորհուրդին հետ քննարկելու համար ռուսական գործոց դերակատարութեան ծրագիրը: Պալուեւսքի շեշտեց, որ Իրաք ուղարկուելիք ռուս զինուորականները յարձակողական որբեւէ արարելի հետ կապ պիտի չ'ունենան:

Միւս կողմէ, Ծոցի իշխանապետներն ու Թագաւորները երէկ գարկ տուին Սատտամ Հիւսէյնը աքսորելու կոչներուն: Անոնք կ'ըսեն, որ Սատտամ պէտք է հեռանայ փրկելու համար իր ժողովուրդը: Ծոցի Գործակցութեան Խորհուրդի անդամ վեց երկիրները հաւանարար միացեալ յայտարարութիւն մը հրատարակեն այս ուղղութեամբ: Արաբական Միացեալ Էմիրութիւններ Շարմէլ Շէյխի արաբական վեհաժողովին ներկայացուցած էր առաջարկը, որ սակայն քննադատուեցաւ արաբական այլ երկիրներու կողմէ:

Արաբական Լիկայի ընդհանուր քարտուղար Ամր Մուսա կոչ ուղղեց արաբական երկրորդ վեհաժողովի մը՝ քննարկելու համար Իրաքի տագնապը եւ լուծելու համար գայն:

(Ա.ՅՓ)

**ԿԱՂԸ՝ ՍԿԻԶԲ ԱՐԵԱԳԱԼԻ ՈՒ ՀՍԿՈՒՍԻ ՀՈԳԵԹՈՎ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ**

Մեծ պահոց քառասնորեայ շրջանը, կիրակի օրուան Բուն Բարեկենդանով սկսաւ Հայ եկեղեցույ մէջ: Վարդ Չորեքշաբթի, 5 Մարտ 2003ին, մեր բոլոր եկեղեցիներուն մէջ կը սկսին Արեւազալի եւ Հսկումի արարողութիւնները, որոնք այնքան գրաւիչ են մեր ժողովուրդին համար ու սրտամտ: Երկրորդ տարին ըլլալով, Ն. Ս. Օ. Տ. Արամ Ա. վեհափառ հայրապետին հրամանով, Անթիլիասի Մայր տաճարին մէջ հաւատացեալ ժողովուրդը ինք կը կատարէ Արեւազալի ու Հսկումի երգեցողութիւնները, ամբողջականօրէն մասնակից դառնալով եկեղեցական թովիչ արարողութեան:

Այս տարի եւս, միաբան հայրեր քարոզախօսութիւն պիտի կատարեն Արեւազալի ու Հսկումի ժամերգութեանց աւարտին: Չորեքշաբթի օրերը Արեւազալի աւարտին, իսկ Ուրբաթ օրերը Հսկումի աւարտին Անթիլիասի Մայր տաճարին մէջ: Թեմական եկեղեցիներու մէջ եւս, Լիբանան ու այլ թեմեր, Մեծի Տանն Կիլիկիոյ միաբան հայրեր քարոզախօսութիւն պիտի կատարեն ու հոգեւոր դասախօսութիւններ պիտի տան նաեւ Հայ եկեղեցասիրաց եղբայրակցութեան կեդրոնին մէջ, արժեւորելու համար քառասնորեայ պահոցը իրենց շրջանը:

Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան կողմէ հռչակուած «2003 Աստուածաշունչի Տարուան» առիթով, միաբան հայրերու քարոզախօսութիւնները ծրագրուած կերպով կեդրոնացած պիտի ըլլան Աստուածաշունչի կարեւորութեան ու գանազան գիրքերուն ըզմանդակութեան եւ փոխանցած պատգամներուն շուրջ:

السيرة | السيرة | السيرة | السيرة | السيرة

**ԻՆՉ ԿԸ ԳՐԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐԹԵՐԸ**

Տեղական մամուլը իր երէկուան թիւին մէջ լուսարձակի տակ առած է Շարմէլ Շէյխի մէջ կայացած Արաբական Լիկայի 15րդ վեհաժողովը, անոր ընթացքին տեղի ունեցած իրադարձութիւններն ու անոր հաղորդագրութիւնը, Սուրիոյ մէջ կատարուած խորհրդարանական ընտրութիւնները, Իրաքի մէջ նոր նիւթերու յայտնաբերումը եւ Ֆրանսայի նախագահ Ժաք Շիրաքի Ալճերիայի այցելութիւնը:

«Անուար» գրած է, թէ Ասատ կը հաստատէ Իրաքի դէմ պատերազմը մերժող Արաբական Վեհաժողովի որոշումին կարեւորութիւնը: Ըստ թերթին, քաղաքական եւ տեղեկատուական արշաւը ծաւալի Ուաշինկթընի եւ Լոնտոնի մէջ՝ Շարմէլ Շէյխի վեհաժողովին արդիւնքներուն մասին:

«Տիար» նշած է, թէ նախագահ Պաշշար Ասատի ձեռք կ'արձանանայ դրական գնահատանքի արաբական տարբեր երկիրներու մէջ:

«Մուսթափալ»-ի համաձայն, նախագահ Ասատ կ'ըսէ. Ուաշինկթընի նպատակն է հաստատել խաղաղութիւն մը, որ ձեռնտու է Իսրայէլի: «Շարմէլ Շէյխի վեհաժողովը մերժեց Իրաքի դէմ պատերազմը», նշած է օրաթերթը:

«Պայրաք» գրած է, թէ Լահուտ կառչած մնաց Պէյրութի վեհաժողովին, արաբ ղեկավարները հետեւեցան անոր՝ ձեռնարկելու վեհաժողովը փրկելու համար: Թերթին համաձայն, «նախագահական յանձնախումբ»-ի առաքելութիւնը արագացնելու փորձերը սկսան եւ քննարկելու համար անոր առաջին քայլը՝ Լահուտ, Մուսթափալ, Չէյն Ապտին եւ Համա Փարիզ կ'ուղղուին:

Ըստ թերթին, Սէուտական Արաբիա եւ Քուէյթ կ'ողջունեն Սատտամի հեռացումը պահանջող կոչերը:

«Լիուս» գրած է, թէ Ասատի ձեռք եւ Ապտալի իշխանին իմաստութիւնը փրկելու Շարմէլ Շէյխի վեհաժողովը: Ժողովը հապի կրցաւ հրապարակել հետեւեալ որոշումները. արաբական ապահովութեան ապահովում, միացեալ պատասխանատուութեան անհրաժեշտութիւն եւ Իրաքի դէմ պատերազմը ար-

գիլելու համար նախագահական յանձնախումբի յառաջացում: «Նահար» նշած է, թէ Մուսթափալ միջամտեց արգիլելու համար Սէուտական Արաբիոյ դէմ Քապաֆիի յարձակումը, իսկ Իրաք յայտարարեց Անթաքի եւ Վի. Էքսի ձեռք բերումը: Ռիատ, Մանամա եւ Քուէյթ նեցուկ կը կանգնին Արաբական Միացեալ Էմիրութիւններուն, իսկ Սատտամը իշխանութեան հեռացնելու առաջարկ փոխանցուեցաւ իսրայէլի վեհաժողովին, գրած է օրաթերթը:

Սուրիոյ ընտրութիւններուն ակնարկելով, «Նահար» գրած է, թէ Դամասկոս տեղեկացաւ կարգ մը թեկնածուներու կողմէ ձայներ գնելու իրողութեան եւ երկու պետութիւն չ'ունեցող կուսակցութիւններու ընտրապայքարի մասնակցութեան:

«Պայրաք»-ի համաձայն, սուրիական ընտրութիւններուն քուէարկողներու մեծաթիւ մասնակցութիւնը ցոյց կու տայ սուրիացիներուն քաղաքական հասունութիւնն ու նախագահ Ասատի շուրջ խմբուելու անոնց յանձնառութիւնը:

Պաղտատի մէջ նոր նիւթեր գտնելու վերաբերող իր լուրին մէջ «Մուսթափալ» գրած է, թէ Պաղտատ կը յայտարարէ, որ գտնուած է «Անթաքա» փոշին եւ ջիդեր քայքայող «Վի. Էքս» կապը:

Իրաքեան հարցին այլ պարզացումներուն մասին «Լիուս» գրած է, թէ Էրտողան կը յայտարարէ, որ խորհրդարանին կողմէ երկրորդ նիւթի մը գույքները անոնց իրաքեան մասին որոշում չ'կայ: Ըստ թերթին, թուրքիոյ մերժումը Փենթակոնը կը հարկադրէ վերատեսութեան ենթարկել Իրաքը գրաւելու իր ծրագիրները:

Թերթը նշած է, թէ Իրաքը գրաւելու Ուաշինկթընի պատրուակները ձախողեցնելու միտումով՝ Պաղտատ կը յայտարարէ վեց նոր հրթիռներու փնտրումը եւ հաւաքական քանդումի պէնթերոն մասին տեղեկութիւններ կը բացայայտէ:

Ըստ «Քիֆահ Արապի»-ի, Ուաշինկթըն լրտեսած է Ապահովութեան Խորհուրդին անդամ երկիրներուն ներկայացուցիչներուն հետաձայնային խօսակցութիւնները:

«Մուսթափալ» լուսարձակի տակ առած է այն երեւոյթը, թէ Իսրայէլ կը պոռնակեցնէ ամերիկացիները երբեք Պաղտատ մուտք գործելու սխալին մէջ չ'իյնալու:

«Անուար» գրած է, թէ Իրաք կը փնտրէ «Սոււուտ - 2» տիպի եօթը հրթիռներ եւս:

Ըստ թերթին, Ալճերիոյ մէջ ակտիւ քանկէս միլիոն ալճերիացիներ կը դիմաւորեն ժաք Շիրաքը:

Այս մասին «Մուսթափալ» նշած է, թէ արաբներու բարեկամը վարդերով դիմաւորուեցաւ երկու միլիոն ալճերիացիներու կողմէ:

«Սաֆիր» նշած է, թէ Շիրաք Ֆրանսայի առաջին նախագահն էր, որ Ալճերիա կ'այցելէ. ան շրջեց տարիներ ի վեր տիրող կառուցութիւնը եւ դարձուց պատմութեան մէջ արաբական ցաւալի էջ մը, գրած է օրաթերթը:

«Նահար» գրած է, թէ Շիրաքի Ալճերիայի այցելութիւնը կը փակէ անցեալի էջը եւ ճամբայ կը հարթէ երկու երկիրներուն միջեւ նոր ընկերակցութեան մը դիմաց:

Պաղտատի մասին «Տիար» նշած է, թէ կը շարունակուին իսրայէլեան բռնարարները՝ Ռաֆահի եւ Խան Եունէսի մէջ. երեք պաղեստինցիներ կը նահատակուին եւ 46 ուրիշներ կը վիրաւորուին:

Այլ լուրերու կարգին «Տիար» նշած է, թէ Փիոնկեանկ Ուաշինկթընը կը դատապարտէ Քորէայի մէջ կորիպային պատերազմի մը պատրաստուելու յանցանքով:

Ըստ «Անուար»-ի, Արաբական Միացեալ Էմիրութիւնները կ'որոշեն Իրաքի տագնապի լուծման համար իրենց նախաձեռնութիւնը ներկայացնելու Իսլամական Խորհրդարանի կապակերպութեան վեհաժողովին:

«Քիֆահ Արապի»-ի համաձայն, Փաքիստան ձեռքարկեց 11 Սեպտեմբերի յարձակումները ծրագրած ուղեղը, իսկ հակասասցումը եւ հաւաքական քանդումի պէնթերոն մասին տեղեկութիւններ կը բացայայտէ:

Ըստ «Քիֆահ Արապի»-ի, Ուաշինկթըն լրտեսած է Ապահովութեան Խորհուրդին անդամ երկիրներուն ներկայացուցիչներուն հետաձայնային խօսակցութիւնները:

**ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARDԸ ՏՆՏԵԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ**

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:

### ԺՈՂՈՎՈՒՐԴԵ ԱՄԲՈՒ ՉԷ...

... Հետեւաբար անոր հետ պետք է վարուիլ իբրև ամբոյ: Հիմնական տարբերությունը ժողովուրդին եւ ամբոյին միջեւ այն է, որ առաջինը կ'առաջնորդուի իր բնատուր եւ թերեւս բնագոյալին իմաստութեամբ, իսկ երկրորդը միայն կոյր ու ժխտական կիրքով եւ օրին մէկը կրնայ պոռթկանքով վերածուելով՝ դառնալ ու հարուածել զինք գրգռողները:

Մեր ակնարկութիւնը բնականաբար կը վերաբերի քաղաքացիական պատերազմի մէջ ստեղծուած ընտրական այն ժխտական մթնոլորտին, որուն հեղինակները կատարելապէս անպատասխանատու են:

Երեկ այս սիւնակէն ըսինք, որ այսօր կըրկնութեան գնով դարձեալ կ'ըսենք, թէ ընտրապայքարը պետք է պահել առողջ սահմաններու մէջ՝ գովաբանելով կամ թմբկահարելով տուրքի բեկեւծուի մը առաւելութիւնները: Հոս խնդիր չենք տեսներ:

Խնդիրը կը յառաջանայ այն ատեն, երբ պայքարը կը վերածուի փողոցային մակարդակով լեզուակռուի ու կը սահմանափակուի միայն «միւս» թեկնածուի վարկաբեկելու կամ վատաբանելու վարքագիծով:

Հոս է, որ անպատասխանատու մարդիկ իրենց սեւ գործը կը կատարեն: Ժողովուրդը արժանի չէ այս կացութեան, ուր Ս. Դեմիրճեանի կողմնակիցներէն շատեր, տպագիր կամ էլեկտրոնային մամուլով, անդադար կը սեւցնեն նախագահ Քոչարեանն ու անոր գորակցողները: Իրենց այս կիրքին մէջ այնքան կուրցած են այս շրջանակները, որ այլեւս մոռցած են, թէ իրենք ունին թեկնածու մը, որուն նկատմամբ իրենք պարտաւորութիւն ունին՝ քարոզչութիւն ի նպաստ անոր իրական կամ երեւակայական առաւելութիւններուն:

Չի բաւեր անդադար կրկնել, թէ ան այսինչին գաւակն է, ուրեմն... Ուրեմն ի՞նչ: Քանի մը օր առաջ հայրենի մամուլին մէջ յօդուածագիր մը հարց կու տար, որ նախագահ ընտրելու համար եթէ պիտի առաջնորդուի իր հայր-զաւակ կապով, ուրեմն ինչո՞ւ հրապարակ չըջաշէլ նաեւ Զարոբեանի կամ Քոչինեանի որդիները եւ: Չէ՞ որ Զարոբեան եւ Քոչինեան եւ «լաւ» գործեր ըրած են...:

Պահն է լրջանալու, որովհետեւ այս վարքագիծը եապէս վնասակար է մեր ժողովուրդին եւ ուշ կամ կանուխ ան իր ըսելիքը կ'ըսէ, որովհետեւ ամբոյն չէ:

ՎԱԶԷ ԲԲՈՒՏԵԱՆ

### ԽԱԹԵՄԻ ԿԸ ՊԱՐԳԵԻԱՏՐԷ ԴՈՎՏ. ՀԱՐՄԻԿ ԴԱԽԹԵԱՆԸ

30 Յունուարին, գիտութեան եւ մշակութի մարզերուն մէջ իրենց ներգրուած ունեցած երեք վաստակաւոր իրանցի գործիչներու կողմէն, իրանի նախագահ Մոհամադ Նախաբեանի կողմէ պարգևատրուած է նաեւ Դոկտ. Հարմիկ Դախթեան՝ իր գիտական երկարամեայ վաստակին եւ ծառայութիւններուն համար: Իր պարգևատրման հանդիսութեան ընթացքին Դոկտ. Հարմիկ Դախթեան արտասանեց խօսք մը, որուն մէջ իր մասնագիտական առաջընթացներուն կողմէն եւ անոնց զուգահեռ, մէջբերումներ կատարեց իրանի դասական գրողներէն, փիլիսոփաներէն, բժիշկներէն եւ մտաւորականներէն:

Դոկտ. Հարմիկ Դախթեան աւարտած է Թեհրանի Բժշկական համալսարանը՝ 1948ին: 1958ին կը վկայւի իրանի հոգեբուժ. Լոնտոնի համալսարանէն: Այնուհետեւ, 1968էն սկսեալ, Թեհրանի համալսարանին մէջ ան կը պաշտօնավարէ իբրև դասախօս:

1970ին Դոկտ. Հարմիկ Դախթեան կը նշանակուի Թեհրանի համալսարանի հոգեբուժական բաժանմունքի տնօրէն, մինչեւ 1988. միեւնոյն ժամանակ, 1979էն 1986, ան վարիչն էր Թեհրանի «Ռուզմէ» հոգեբուժական հիւանդանոցին:

Դոկտ. Հարմիկ Դախթեան 1966ին եղած է իրանի Հոգեբուժական Միութեան հիմնադիր անդամ եւ քանի մը շրջան վարած է այդ միութեան նախագահի պաշտօնը: Ան իրանի հոգեբան առողջապահութեան ազգային կոմիտէի նախագահ է 1988 թուականէն: Դոկտ. Հարմիկ Դախթեան իրանի գիտութիւններու անդամ է 1993 թուականէն եւ «Լիտեր աֆ փիլիսոփայի» կողմով պարգևատրուած է հոգեբուժութեան միջազգային ընկերակցութեան կողմէ՝ 1999ին:

**Հ. Մ. Բ. Մ.**  
ԼԵՔ. ՇՐՋԱՎԱՐՉՈՒԹԻՒՆ

**ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ**

Հ. Մ. Բ. Մ. Լիբանանի Շրջանային վարչութիւնն ստյն յայտարարութեամբ կը յայտնէ, թէ նոր նստավայրին հասցեն հետեւեալն է.

Պուրճ Լամուտ՝ «Երեւանեան» կեդրոն, Բ. յարկ, «Սարգսյան» ակունքին կից:

Վերոնշեալ նստավայրին հետ կարելի է կապուիլ հետեւեալ թիւերով.

Շեռաձայն՝ 01-261108  
Շեռատիպ (Ֆաքս)՝ 01-261109

Ամեն առաւօտ ժամը 9:30էն 12:30 ու կեսօրը ետք ժամը 5:00էն 8:00, բացի Շաբաթ եւ Կիրակի օրերէն:

Հ. Մ. Բ. Մ. ԼԵՔ. ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

### ԻՐԵՆՔ ԱՆԴԱՐՁ ՈՐՈՇՈՒՄԸ ՏՈՒԻՆ

